սեմ, արժանի է մտադրութեան և քննութեան թէ իր բնիկ որդւոյն և թէ ամէն մարդու որ բարեկամ է ճշմարիտ փիլիսոփայութեան։ Այս չեմ վախնար այսուհետև ըսելու, թէ Հայաստան մէկ որոշեալ վիճակ կամ նպատակ մը ունեցեր է յառաջ քան զայլ ազգեր. և որ աւելի հարկաւոր է գիտնալու, դեռ այդ վիճակն լմնցած չէ։ Պաղտնիք մը չէ ըսածս և ոչ խորհրդաւոր բան մը, այլ հնացեալ հաւանութիւն մը Հայ մտաց, թէ դեռ գործ մը ունի կատարելու, բարեբաստիկ գործ մը երկրիս վրայ։ Ամէն բան լմնցած չէ իրեն համար. դուռ մը պիտի բացուի իրեն համար ատեն մը... որ շատ այլ հեռու չէ ինչպէս որ կարծեմ. այդ դուռն երկար ժամանակ կրկին կրկին կղպած փակած չմնայ պիտի. արդէն զօրաւոր բանալիքներ կը տեսնեմ, և համարձակութեամբ կ'ուզեմ ցուցընել, չըլլայ թէ վախնաք... մեր երջանկութեան ապագայ բանալիքն, այդքան երկար ժամանակէ վեր բաղձացեալ բանալիքն, այդ բանալիքն է դաստիարակութիւն։ Դաստիարակութիւն հայրենասիրական. հայրենասիրութիւն յեցեալ 'ի վերայ իմաստասիրութեան և սա հիմնեալ 'ի վերայ սուրբ կրօնից։ Առանց այս կապակցութեան չկայ կատարեալ կրթութիւն, չկայ քաղաքականութիւն, չկայ մարդ կատարեալ։ Ընկերական պարտքերը լաւ կատարելու համար՝ մարդս կարօտ է հայրենական ներշնչման մը. և որպէս զի հայրենասիրութիւնն չմոլորի և յետք չի մնայ, պէտք է որ առաջնորդ ունենայ զիմաստութիւն, նեցուկ՝ զհաւատս, և պսակ՝ զյաւիտենականն ճշմարտութիւն։

Ո՛վ պատանիք, սիրելի աշակերտք, որք քիչ ատենէն՝ ձեր ընտանեաց դառնալու համար, պիտի թողուք այս ձեր երկար ուսմանց սրահները, ուր յետին անգամ կը հնչէ ձայն անձնանուէր հօր մը, որ ինքն այլ պիտի դառնայ իր լուսակաց մենարանը. այդ ձայնն յիշեցընէ միշտ ձեզի ինչ որ քսան տարիէ վեր կը կրկնէր ձեզի և ձեր նմանեացը, թէ աղէկ քաղաքացի ըլլալու համար պէտք է քննել և սովրիլ զհայրենիս։ Այս է առաջին ուսումն յետ ուսման հանդերձեալ կենաց։ Քննեցէք և սովրեցէք ուրեմն, սիրելիք իմ, այդ ազնիւ և բարեբեր Հայաստանը, իբրև հայրենիք ձեր և դայեակ ամենայն աշխարհի. քննեցէք այդոր բնակազմութիւնը, քննեցէք այդոր բարոյականը, քննեցէք այդոր բարգաւաճումը՝ի հարուստ լեզուին, որ ապահով գրականն մ՝է բազմատեսակ արկածներով հնձուած գրականութեանը. քննեցէք զայդ վերջապէս, իր կրօնից զտութեանը, և իր ծիսից վայելչութեանը մէջ. և այդ քննութիւնքդ, այդ ուսմունքդ, յորդոր ըլլան ձեզի աւելի քան զաւելի յարգելու զհայրենիս և մշակելու զայն ըստ ամենայն նշանակութեան բանիս։ Ա՛ սան զի այս իսկ է առաջին պատուէր Աստուծոյ տրուած առ հայրն մարդկութեան, և տրուած բուն իսկ մեր երկրին մէջ. ԳՈՐԾԵԼ ԶՆԱ ԵՒ ՊԱՀԵԼ[1]։

Հ. ՂԵՒՈՆԴ Վ. Մ. ԱԼԻՇԱՆ

ՊԱՏԿԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

Ութերորդ դար.

Ը. Պատկեր. ամ տեսառն 700–799։

Յովհան Իմաստասէր։

Ա. Ատենաբանութիւն*։ — Բ. Կանոնք*։ — Գ. Ճառ ընդդէմ Երեւութականաց*։ — Դ. Ճառ ընդդէմ Պաւղիկեանց*։ — Ե. Կրկին ճառք յաղագս կարգաց եկե-

1. Ծննդ. Բ. 15։

զեցւոյ՝։ — Զ. Ճառ վասն մեծի աւուր միաշաբաթին։ — Է. Յիշատակարան կանոնագրոց։ — Ը. Ի շարականս սմա ընծային շարականքն աւագ տօնից, յորոց զշարականն Դաւթի և Յակոբայն այլում արդեօք համանուն մատենագրի ընծայել արժան է։ Յոմանց սմա ընծայի և «Անսկիզբն բանդ Աստուած», որ յաւէտ Մանդակունւոյն է ընծայելի։ Երկրայականք համարին. ա. Հիմնարկէք եկեղեցւոյ. բ. Օրհնութիւն նորաշէն եկեղեցւոյ. գ. Ճառ յեկեղեցի։ Դարձեալ ճառք ի վերայ ապաշխարութեան և զգաստութեան վարուց (անյայտք և յիշատակեալք միայն առ Յովհաննու կաթողիկոսի)։

Ստեփաննոս Սիւնեցի։

Ա. Պատասխանի Թղթոյ սրբոյն Գերմանոսի որ վասն սիրոյ և միաբանութեան։ — Բ. Թուղթ մի երկայն ի պատասխանի Թղթոյ Անտիոքայ պատրիարգին վասն հաւատոյ դաւանութեան։ — Գ. Այլ թուղթ առ վարդապետս Աղուանից յաղագս պահոց։ — Դ. Բան յաղագս եկեղեցօրհնեաց կարգացն։ — Ե. Ճառ յաղագս բնութեանց զանազանութեան եղականի և աստուածայնոյ։ — Զ. Շարականք աւագ օրհնութեանց։ — Է. Աղօթք մի ի վերջ կանոնի քահանայութեանն։ — Ը. Յանուն Սիւնեցւոյս զտանին հատուածք ի մեկնութեանցն Յոբայ, Դանիելի, Եզեկիելի, Ժամակարգութեան, Քերականութեան և այլն։ — Թ. Գանձք երեք թուով։ — Ժ. Թարգմանութիւնք. Ա. Մատենագրութիւն Դիոնեսիոսի Արիսպագացւոյն բաժանեալ ի չորս գիրս, յորս խօսի զերկնային քահանայապետութեանց։ Բ. Ի գործոց Նիւսացւոյն երկոքին այսոքիկ՝ Յաղագս բնութեան մարդոյ և Յաղագս մարդոյն կազմութեան։ Գ. Պարապմանց և Գանձուց մատեանքն Կիւրղի աղեքսանդրացւոյ։ Դ. Հինգ ի ճառից Աթանասի աղեքսանդրացւոյ համարին թարգմանեալք ի Ստ. Սիւնեցւոյն որք են. ա. Յաղագս մարմնաւորութեան Աստուծոյ բանին. բ. Առ Յովբիանոս թագաւոր յաղագս հաւատոյ. գ. Ընդդէմ Պօղոսի Սամոստացւոյ թէ մի է Աստուած. դ. Յաղագս թէ «Անձն իմ խռովեալ է». ե. Յաղագս յայտնութեան Տեառն։ Ե. Գէորգայ Պիսիդեայ բանաստեղծութիւնն որ յաղագս արարչագործութեան աշխարհի։ Զ. Նոյն ինքն է թարգման և թղթոյն Ս. Գերմանոսի Կ. Պօլսոյ պատրիարգի, զոր ինքնին էր ածեալ 'ի Հայս։

Ղևոնդ երէց։

Յաղագս երևելոյ Մահմետի և պատմութիւն յաջորդաց նորա՝։

Վրթանէս քերթող։

Ճառ յաղագս պատկերամարտից։

Սիմէոն կաթողիկոս։

Քսան և չորք կանոնք ի բարեկարգութիւն աղգիս։

Հիսիքիոս։

Մեկնութիւն Յովբայ, անկատար։

Թեոդորոս անկիւրացի։

Ճառք Գ. ա. Ի խորհուրդ մարդեղութեան. բ. Ի ծնունդն Քրիստոսի. գ. Ի յայտնութիւն Տեառն։

Երուգր։

Խրատական ճառք առ միայնակեացս։

Անդրիմոս Թոստրացի։

Ճառք ի ծնունդն Քրիստոսի և ի մկրտութիւն Տեառն։

Յովհ. Կլիմաքոս։

Սանդուխք աստուածային ելից։

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ